18 Յունուար 1998

የԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

Սիրեցեալ Ժողովուրդ Հայոց Որ յԵրուսաղէմ ի Սուրբ Երկիրն, եւ ի Յորդանան, ի Հայաստան եւ յԱրցախ, եւ ի սփիւոս ցրուեալ։

Տիրոջ ողորմութեամբ, Բեթղեհէմի Սուրբ Այրին եւ Ծննդեան Սուրբ Տաճարին մէջ, հայկական շարականներու օրհներգութեամբ կր տօնախմբենք Սուրբ Ծնունդը Մարդացեալ Աստուածորդւոյն՝ Ցիսուսի

Քրիստոսի:

Երուսաղէմի Սրբոց Ցակոբեանց Միաբանութիւնը եւ մեր ժողովուրդի հաւատաւոր զաւակները, հայկական հայրենիքին ու տարացրիւ հայորդիներուն անունով, կը մատուցանենք փրկական Սուրբ Պատարագը, աղօթելով որ խաղաղութեան իշխանին Սուրբ Ծննդեան պատգամը հնչէ աշխարհի մէջ, ուր որ արհաւիրքներ եւ եղբայրասպան ոճիրներ կը սարսեն խաղաղութիւնը հոգիներուն, եւ կը խորտակեն համերաշխ համակեցութիւնը ազգերու եղբայրութեան։

Քրիստոսի ծննդեան "սքանչելի եւ մեծ խորհուրդը", Ցովհաննէս Աւետարանիչ կը պարզաբանէ յայտարարելով. "Ի սկզբանէ էր Բանըն... Եւ Աստուած էր Բանըն... Եւ Բանըն մարմին եղեւ եւ բնակեաց ի

ubq ..."

Եւ Սուրբ Կոյսէն ծննդեան զարմանահրաշ խորհուրդը, կը լուսաբանուի հրեշտակին պատգամով, երբ հաւատաւոր ու արդարն Ցովսէփին

յայտնեց թէ՝ "Որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն Սրբոյ է։"

Եւ այս նոյն Սուրբ Հոգին է, որ զանազան կերպերով գործած է, եւ ներգործած է տիեզերքի ստեղծագործութենեն սկսեալ, մարդկութեան պատմութեան մէջ։ Ան նոյն Աստուծոյ Հոգին է, որ շունչ տուաւ Եզեկիէլ մարգարէի տեսիլքին մէջ տարտղնուած եւ չորցած ոսկորներուն, եւ զանոնք կեանքի վերակոչեց։ Նոյն Սուրբ Հոգին է, որ մարդիկը կարող դարձուց ճանչնալու Աստուծոյ ճշմարտութիւնը մարգարէներու բերանով։

Եւ ի լրումն ժամանակաց, Հոգին Սուրբ Աստուած, մարդկութեան

յայտնեց ծնունդը Բանին մարմնացելոյ։

Եւ օծեալ Քրիստոսի անձին մէջ, մարդկութիւնը կը գտներ իր յաւիտենական կեանքին ճշմարտութիւնը եւ լուսաւոր ճանապարհը։

Քրիստոս ինքն էր ճշմարտութիւնը, ճանապարհը, եւ յաւիտենական

կեանքը

Եւ ով որ հաւատայ կծանք պարգեւող Անոր զօրութեան, պիտի երբեք չը սարսափի սպառնալիքներէն մեղքի, ատելութեան, չարիքի ճիրաններէն բռնուած մարդերու եւ մարդկային ընկերութեան։ Որովհետեւ առատաբաշխ եւ կենդանարար Քրիստոսի Սուրբ Հոգին, նոր շունչով, նորոգուած կեանքով, ճշմարտութեան հաւատքով, արդարութեան յոյսով, եւ երանական խաղաղութեան սիրով պիտի զինէ եւ պիտի զօրացնէ հաւատաւոր հոգիները յաւերժութեան նաւորդներուն։

Քրիստոսի ծննդեան աւետիսը ընդունող, եւ Բեթղեհէմի հովուաց դաշտի երկնակամարէն հրեշտակներու օրհներգութեան ձայնակցող հայ ժողովուրդը, ապացոյցը տուած է դարերով սպառազէն իր հաւատքին։ Եւ շարան–շարան իր արիասիրտ զաւակներուն յաղթական նահատակութեան յիշատակովը կ'երգէ⊷

Որք առին զըսպառազինութեան Զրահըս հաւատոյ սրտից իւրեանց, Եւ ընկալան ի գլուխ՝ Սաղաւարտ փրկութեան Ըզնըշան խաչին, Սուսեր ընդ մէջ ածեալ՝ Ըզճըշմարիտ Սուրբ Հոգին, Բարեխօսութեամբ սոցա, Քրիստոս, խնայեա ի մեզ։

Բարերախտութիւն է որ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետականացման, Հայութեան համար պետական կրօնք յայտարարման 1700 ամեակը, կը զուգադիպի ամբողջ Քրիստոնեայ աշխարհի խանդավառութեան, Քրիստոսի ծննդեան 2000 ամեակը փառատօնելու։

Անկախ Հայաստանի մեր պետութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետութեան հոգեւոր իշխանութեան գործակցութիւնը, կրկնութիւնն

է 301 թուականին տեղի ունեցած պատմական իրադրութեան։

Այսօրուան պետական աւագանին եւ ժողովուրդը կը մկրտուի Քրիստոսի անունով եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնած Սուրբ Միւռոնով, խաւարամէտ հաւատուրացութեան եօթանասուն տարիներու մեհեաններու փլուզումէն յետոյ։

Այսօր, աշխարհին պիտի յայտարարենք, թէ անխորտակելի է կամուրջը հայ Քրիստոնեայ հաւատքին, հաստատուած յաւիտենական

Ulahli dto Bhuniu Pphumnuh:

Պիտի մէկտեղուին եւ օգտագործուին բազմապիսի տաղանդները հայ ստեղծագործ հոգիին։ Եւ հայ լեռնաշխարհի եւ հայոց պատմութեան արձագանգուն ղօղանջներուն պիտի ձայնակցին հոգիները՝ ներկայ եւ ապագայ հայ սերունդներուն, եւ պիտի ցնծերգեն —

"Փառք ի բարձունս Աստուծոյ, Եւ յերկիր խաղաղութիւն, Ի մարդիկ հաճութիւն։"

"Փառք հրաշափառ Ծննդեան Քո, Տէր:"

Թորգոմ Արք. Մանուկեան

Christmas Message from Bethlehem

18 January 1998

To our beloved congregation in Jerusalem and the Holy Land, To all members of the Armenian Apostolic Orthodox Church, To all children of the universal Christian Church, To believers everywhere

Greetings from the humble Grotto of the Nativity in our hallowed Bethlehem, where our Lord and Saviour Jesus Christ was born, two thousand years ago.

We are filled with joy and exuberance on this auspicious day, a day that has changed the history of the world with its promise of redemption and salvation.

Christmas Day is not only an occasion for happy feelings, for euphoria, but also a unique experience, the renewal of faith, which we would like to share with you all. For it is on this day, which heralds the onset of a new year and a new life, that we take stock of ourselves and review our thoughts and deeds over the past 12 months, and reaffirm our resolution to be more worthy of the grace of God. And above all, to make this world a better place to live not only for us, but for our children and our children's children.

As we stand on the threshold of a new millennium, we hope that the future will hold a better promise for us all. We pray that the millennium will usher in a new era of peace and harmony, not only in our troubled part of the world, but all over the globe.

We hear, with great sorrow, of daily depredations that claim the lives of innocent victims. Murder and massacre, Arab against Jew, black against white, brother against brother. We grieve for every drop of blood shed, and call on the combatants and antagonists to lay down their arms and open their hearts to each other. We urge them to resort to a dialogue instead of a dagger to resolve their differences - for we are all the children of God, we are all brothers and sisters, enjoying equal rights to the mercy, love and justice of God.

We pray that, people will learn to turn their swords into ploughshares and their spears into pruning forks, and that nations shall not learn war any more. 1998

Our immortal city of Jerusalem has been ravaged by decades of war and the threat of war. We have raised a generation of children many of whom have been maimed not only physically, but psychologically and spiritually as well.

What does the future hold for them? Will the poison that has been instilled in their heart through the suffering that has been imposed on them, ever be washed away?

People seem to have lost their faith and are only yearning for transitory material gains, piling treasures for themselves on earth, oblivious of the quintessential joy of sharing in the paradise that awaits the righteous in heaven.

Alas, in today's materialist age, some people believe spirituality and faith have no relevance to their lives any more, that they do not need God anymore. Others, caught in adversity and affliction, cry out that God has abandoned them.

But God, who created us all out of clay, has never abandoned us. It is we who abandon Him. Even before we cry out to Him, He has heard us and He has replied.

"Your 'O God' is my 'I am here', " God tells us, reassuring us that He is always here, with us. We feel His presence every time and everywhere. There are times when we have some difficult questions to ask Him, questions we find unanswerable. But though He may not say anything, we feel His love descending upon us, obliterating all doubt.

For God does truly love the world.- He sent His Only Begotten Son to redeem us with His death.

But today, it is not His death we are mourning, but His birth we are celebrating.

May this day dawn upon us always with joy and peace in our hearts, in accordance with the message of the Angels: "Glory to God in the highest, and peace on earth, and good will among the people."

Amen.

Abp. Torkom Manoogian